

(Ավտոմեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման)

ք. Երևան

" 1 " 02. 2017թ.

Կատարողը անհատական ձևով անցկացնում է վերանորոգումը և սպասարկումը ի դեմս ՍՊԸ-Ն, ով գործում է համաձայն ՍՊԸ-Ն /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ մի կողմից, և "Կարկոմավտո սերվիս" ՍՊԸ-Ն, ի դեմս տնօրեն Ա.Յովսեփյանի, ով գործում է Քննչության կանոնադրության համաձայն /այսուհետ նաև՝ Կատարող/ մյուս կողմից, միասին նաև Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Կատարողը պարտավորվում է իրականացնել Պատվիրատուին պատկանող վերանորոգման ենթակա ավտոմեքենաների տեխնիկական սպասարկումը, ընթացիկ և հիմնական նորոգումը՝ համաձայն պատվիրատուի կողմից ներկայացված սպասարկման ենթակա ավտոմեքենաների ցանկի /հավելված 1/, որը կազմում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

1.2. Պատվիրատուն պարտավորվում է վճարել կատարված աշխատանքների համար՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, համաձայն Կատարողի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրի:

2. Վճարման պայմանները

2.1. Տեխ.սպասարկման, ընթացիկ և հիմնական նորոգման աշխատանքների արժեքի վերջնական հաշվարկը ճշտվում է աշխատանքների ավարտից հետո՝ հաշիվ-ապրանքագրի հիման վրա, և նշված գումարը ենթակա է վճարման 5/հինգ/ բանկային օրվա ընթացքում:

2.2. Այն դեպքում, երբ Կատարողի կողմից ներկայացվել է էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիր /Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ / Պատվիրատուն պարտավոր է այն հաստատել 10 օրացուցային օրվա ընթացքում: Պատվիրատուի կողմից էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիր /Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ / հաստատելը համարվում է վերջինիս կողմից Կատարողի կողմից կատարված աշխատանքների /մատուցված ծառայությունների/ ընդունում:

2.3. էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիրը /Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ/ Պատվիրատուի կողմից չհաստատելու դեպքում վերջինս պարտավոր է սույն պայմանագրի 2.2 կետում նշված ժամկետում Կատարողին գրավոր ներկայացնել էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիրը չհաստատելու պատճառները:

2.4. Սույն պայմանագրի 2.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիրը /Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ / Պատվիրատուի կողմից չհաստատելու և/կամ նույն ժամկետում չհաստատման պատճառը Կատարողին գրավոր կերպով չներկայացնելու դեպքում էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիրը /Ապրանքների մատակարարման հարկային հաշիվը / համարվում է Պատվիրատուի կողմից ընդունված, իսկ Կատարողի կողմից մատուցված ծառայությունների դիմաց գումարը ենթակա է վճարման 5 /հինգ/ բանկային օրվա ընթացքում:

3. Կողմերի պարտականությունները

3.1. Պատվիրատուն պարտավորվում է.

- իր ավտոմեքենաների տեխնիկական սպասարկումը և նորոգումը Կատարողի մոտ իրականացնելիս ներկայացնել լիազորագիր՝ պատասխանատու անձի անվամբ.

- ավտոմեքենաների վերանորոգումն իրականացնելուց հետո անսարքության հայտնաբերման դեպքում անմիջապես տեղյակ պահել Կատարողին.

- Ընդունել Կատարողի կատարած աշխատանքը և կատարել վճարում սույն պայմանագրի 2-րդ բաժնում նախատեսված կարգով և ժամկետներում:

- Կատարողի պահանջով կատարել կանխավճար Կատարողի կողմից մատուցվող ծառայությունների արժեքի մինչև 50 տոկոսի չափով:

3.2. Կատարողը պարտավորվում է.

- վերանորոգումը և տեխ. սպասարկումը կատարել Պատվիրատուի կողմից ներկայացված նախնական հայտի հիման վրա, որում պետք է նշված լինեն վերացման ենթակա թերությունները: Նախնական հայտի բացակայության դեպքում կատարվող աշխատանքների ծավալը որոշում է Կատարողը:

- իրականացնել Պատվիրատուի կողմից բերված ավտոմեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքները: Պատվիրատուի ցանկությամբ կազմելով ավտոմեքենայի հայտնաբերված թերությունների նախնական գնահատման ակտ, որը համարվում է կատարվելիք աշխատանքների փոխադարձ համաձայնագիր, որում նշվում են՝ աշխատանքների կատարման ծավալը, արժեքը և ժամկետը

- վերանորոգման և տեխ. սպասարկման աշխատանքներն իրականացնել որակով և ժամանակին, իսկ աշխատանքներն անորակ կատարելու դեպքում՝ իր հաշվին և սեղմ ժամկետում վերացնել հայտնաբերված թերությունները:

4. Կողմերի պատասխանատվությունը

- 4.1 Պատվիրատուի կողմից Կառարողի պատշաճ կատարված աշխատանքի արդյունքն ընդունելուց հրաժարվելու դեպքում կողմերի միջև տարածայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ ավտոմեքենան այդ ընթացքում մնում է Կատարողի տեխ.սպասարկման կայանում: Համաձայնության գալու դեպքում միայն ավտոմեքենան վերադարձվում է Պատվիրատուին:
- 4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքների արժեքը սույն պայմանագրի 2-րդ բաժնում սահմանված կարգով և ժամկետներում չվճարելու դեպքում Կատարողին վճարում է տույժ՝ կատարված աշխատանքների արժեքի 0.5 % - ի չափով, յուրաքանչյուր ուշացած օրվա համար, բայց ոչ ավել, քան պարտքի գումարի չափը:
- 4.3 Կատարողը պատասխանատվություն է կրում իր կատարած աշխատանքների, ծավալների, որակի և ժամկետների համար: Այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցի պատվիրատուի լիազորված անձի կողմից ընդունելու պահին կպարզվի, որ աշխատանքները կատարվել են թերություններով, ապա Կատարողը պարտավորվում է սեղմ ժամկետում, անհատույց վերացնել թերությունները:
- 4.4 Կատարողը, պայմանավորված ժամկետում պատվիրված աշխատանքները չկատարելու դեպքում, Պատվիրատուին վճարում է տույժ՝ տվյալ պատվերի արժեքի 0.5 %-ի չափով, յուրաքանչյուր ուշացած օրվա համար, բայց ոչ ավել, քան պատվիրված աշխատանքների գումարի չափը:

5. Վեճերի լուծման կարգը

- 5.1 Կողմերի կողմից սույն պայմանագրով նախատեսված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում մյուս կողմը գրավոր պահանջ է ներկայացնում իր խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ: Մեկ շաբաթվա ընթացքում բավարարում չստանալու դեպքում կողմը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է իր խախտված իրավունքների պաշտպանության նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հայց ներկայացնել դատարան:
- 5.2 Կողմերի միջև ծագած այլ տարածայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չհասնելու դեպքում այդ վեճերը ենթակա են լուծման դատական կարգով:
- 5.3 Կողմերի միջև սույն պայմանագրով չկարգավորված իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ համապատասխան:

6. Եզրափակիչ և անցումային դրույթներ

- 6.1 Պայմանագիրը կազմված է միևնույն իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկ օրինակ:
- 6.2 Եթե կողմերից մեկը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում սույն պայմանագրով նախատեսված իր պարտականությունները, ապա մյուս կողմը կարող է միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը՝ 21 օր առաջ գրավոր կերպով այդ մասին նախազգուշացնելով մյուս կողմին:
- 6.3 Սույն պայմանագիրը ենթակա է փոփոխման գրավոր կերպով Կողմերի կողմից սույն պայմանագրին կից լրացուցիչ համաձայնագիր կազմելու միջոցով:
- 6.4 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից և գործում է մինչև 2017թ.-ի դեկտեմբերի 31-ը:
- 6.5 Կողմերի իրավաբանական հասցեի, կարգավիճակի, սույն պայմանագրին առնչվող այլ տվյալների փոփոխության դեպքում Կողմը այդ մասին պարտավոր է 3/երեք/ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել մյուս կողմին: Նշված պարտականության չկատարման բոլոր բացասական հետևանքները կրում է ծանուցման պարտականություն ստանձնած կողմը:

7. Կողմերի վավերապայմանները






ԿԱՏԱՐՈՂ

«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Տիգրանյան 1 փակուղի 1
HSBC բանկ
Հ/Հ 002-121630-001
ՀՀՀՀ 00131374
Հեռ. 010 24-96-40

ՏՆՕՐԵՆ


Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՏՆՕՐԵՆ

